ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 մայիսի 2023 թվականի N 180 - Ա

2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-ԻՆ «ՈՐՈՆՈՂԱՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ «ՏԱԹև» ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ ՊԱՅԹՅՈՒՆԻ ԴԵՊՔՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՈՒՍԱՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանի Հանրապետության ՀՀ Սյունիքի մարզպետի 2022 թվականի դեկտեմբերի 14-ի «ՀՀ Սյունիքի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2023 թվականի հիմնական միջոցառումների պլանը հաստատելու մասին» N503-Ա որոշմամբ հաստատված պլանի 9.4 կետի 9.4.1 ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետի պաշտոնակատարի 2023 թվականի մայիսի 11-ի N20/740 գրությունը՝

ո ր ո շ ո ւ մ ե մ.

1. «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ «Տաթև» մասնաճյուղում 2023թ. մայիսի 26-ին անցկացնել «Որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպումը «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ «Տաթև» մասնաճյուղում պայթյունի դեպքում» թեմայով ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն,
2. ՈՒսումնավարժության ղեկավար նշանակել ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետի պաշտոնակատար, փ/ծ փոխգնդապետ Ռ. Սահակյանին,
3. ՈՒսումնավարժության ղեկավար Ռ.Սահակյանին՝ ապահովել նախապատրաստական աշխատանքների իրականացումը, փաստաթղթերի մշակումը և ծանուցումը ուսումնական վարժության մասնակիցներին,

4. ՈՒսումնավարժությունում ընդգրկել՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչությանը, Հայաստանի Հանրապետության ոստիկանության Ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական գումարտակի 5-րդ սպայական վաշտից 1 հաշվարկ, «Կապանի Բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ «Տաթև» մասնաճյուղը, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Սյունիք ԳԳՄ-ն:
5. Մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

12.05.2023

X

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2023թ. մայիսի 12
ք. Կապան